ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏՕԻ

Առիթ ունենալով մի փոքրիկ ճանապարհորդութիւն անելու Պարսկաստանի մի մասում, Սալմաստում, կարևոր եմ համարում հայ և Թուրք տարրերի, նրանց սովորութիւնների, նիստ ու կացի մասին տեղեկութիւններ հաղորդել յարգելի ընթերցողներին։

Հոկտեմբերի 15-ի առաւօտը գեղեցիկ է։ Պայծառ արեգակը շողշողում է երկնակամարի վերայ։ Ժամը ինին իմ ընկերոջ հետ Թողի Երևանի կեղտոտ, զզուելի փողոցները, միևնոյն ժամանակ և հարուստ փարթամ բնութիւնը։

Մեր առաջ ձգւում է դէպի երկինք փառահեղ Մասիսը։ Ամբողջ ժամերով նայում եմ հակայ, նախնական Արարատին, որը Երևանի դաշտի ամենագեղեցիկ տեսարանն է կազմում։

Ամբողջ օրը գնում ենք ամենավատ և Թոզոտ ճանապարհով։

Խճուղին բոլորովին անպէտք, կամուրջները քայքայւած, Թոզն էլ 2 վերշոկ հաստութեամբ է, կարծես Երևանի փողոցների շարունակութիւնը լինի։ Ճանապարհի երկու կողմերում խիտ առ խիտ սփռւած են հայ և պարսիկ գիւղերը իրանց բամբակի և բրնձի արտերով։ Ժամը վեցն է, կառապանն յայտնում է, որ լաւ չէ առաջ գնալ, որովհեան մօտակայ Սաղարագ Թուրք գիւղը լիքն է գողերով, վտանգաւոր է։ Պէտք է ասել, որ մեզ հետ կար մի Թուրք ուսուցիչ ռուսաց տարրական դպրոցի և մի փոքրիկ տղայ։

Վեր եկանք մի Թուրք իջևան։ Փոքրիկ, նեղ և կեղտոտ բնակարանում ամեն բան կարելի է գտնել։ Երկու առանձին-առանձին «սաղրներ» էր կապած, մէկը մեծ, մաքուր պատրաստած, միւսը անմաքուր։ Թուրքերը ուսուցչի ողջունից և արտասանութիւնից ճանաչելով, որ իրանցից է, իսկոյն հրաւիրեցին մեծ սաղրը։ Փոքր սաղրը, ինչպէս երևում է, «մուռտառ» հայերի համար է։ Երկու ընկերներս իրար երես նայեցին և հասկանալով բանի զօրութիւնը, տեղաւորուեցինք մեզ վայել ու աչքից ընկած

սաղրի վրայ։ Իրաւ է, շատ անգամ էի լսել պարսիկների դէպի հայերն ունեցած արհամարհանքը, բայց գործնականը դեռ չէի տեսել։ Իշխանի տէրն հրամայում է ծառային գնալ մարաքից բերել հայերի ջուր խմելու համար։ Երկու բոպէից յետոյ մեր մօտ դրած է մի կեղտոտ, ջարդած ու ծռմռած թիթեղեայ ջրի ման։ Ես մօտեցայ ջրի կժին, որ ջուր վերցնեմ և լացուեմ, սաստիկ թողուած էի. ընկերս փորձած է, ինձ զգուշացնում է. այդ միջոցին անբաւական դէմքով օգնութեան հասաւ պարսիկը։ Անգիտակցաբար սխալուած էի, կժին չը պէտք է կպչէի։ Ես լուռ ու մունջ և զարմացմամբ դիտում եմ այդ վայրենի և տարօրինակ խարութիւնը։ Փոքրիկ, եօթը տարեկան պարսիկ երեխան միամտաբար մեր ամանից ջուր է խմում. թուրքը բղաւում է նորա վերայ և ասում.

«Այդ ամանը հայինն է, մուռտառ է, ուրեմն ինքդ էլ մուռտառուեցիր։

Երեխան երկար մեզ նայեց. կարմրեց ու աչքերը ցած թողեց։

Երևի մտածում է. «չէ՞ որ այսօր սաստիկ շոքին այդ բարի մարդիկներից դեղձ ու ձմերուկ առայ և պապակած բերանս զովացրի»։ Թէյը պատրաստ է։

Ուժակները սրբում են. դնում կեղտոտ մատուցարանի վրայ և առաջ բերում։ Ուսուցիչը լուռ է և, ինչպէս երևում է, տեսնելով մեր անկարմար դրութիւնը, վրդոված է։

—Օ՛ֆ, ինչ ուզում են թող ասեն այս շները, ես ձեզ հետ պէտք է թէյ խմեմ և ընթրիք անեմ, ասաց ու թռաւ մեր սաղրը։ (Այս երիտասարդը Երևանում ուսում առնելով, բաւականին հայերէն գիտէր)։ Թուրքերը խէթ-խէթ են նայում թէյից յետոյ հաց դրինք և սեխը կտրեցինք։ Պարսիկներն էլ չը համբերեցին, նրանց փընթփընթոցը դառնում է յայտնի բողոք, յանդիմանութիւն։ Սկսեց իշխանի տէրը՝

—Ամո՛թ քեզ, հաղար ամօթ, դու էլ խամ այն փոքրիկ երեխան չես, որ անգիտակցաբար հայի ամանից խմեց։ Դու անպատուում ես մուսուլմանների կրօնը, դարեոր սովորութիւնները։ Մթթէ կարելի է հայի հետ սեղան նստել, նորա հացը կտրել, պահ, պահ, պահ...»։—Ուսուցիչը բորբոքւում է։

—Շատ լաւ եմ անում, ձեր գործը չէ։ Դուք, որ հային մուռտառ էք համարում, հիմայ, հէնց հիմայ եթէ սրանք մի ժամ այստեղից բացակայ լինեն, կը գողանաք սրանց հացն էլ, շորերն էլ և անուշ կանէք և այդ ձեր կարծիքով մուռտառ չէ։ Մի լաւ նայեցէք սրանց ձեռքերին, ոտներին, շորերին, հազար անգամ ձեզանից մաքուր են։ Թուրքերը պապանձուեցին, էլ ծպտուն չը հանեցին։ Ուսուցիչը դառնում է մեզ քաղաքավարութեամբ

—Պարոններ, ներողութիւն, սրանք հին քարացած սերնդից են, նոր սերունդը այնքան էլ խորութիւն չի դնում, բարբարոս չէ։

Առաւօտեան արշալոյսը նոր ճրագը դնոտել է։

Մենք ճանապարհ ընկանք։ 60 վերստ եկել ենք, 90 էլ ունինք մինչև

Նախիջևան։ Մեր առջև, բարակ մշուշի մէջ կանգնած է վեհ Մասիսը իւր սպիտակ կատարով։ Դեռ առաւօտեան աղջամուղջը չի քաշուել, դեռ շրջակայ սարերը խաւարի մէջ են, բայց ահա արեգակի առաջին ճառագայթները խաղում են Արարատի կատարին։ Փոքր Մասիսը, որ աւելի կանոնաւոր կոնաձև է, նոր է սկսում իրան պարզ ցոյց տալ։

Արարատեան դաշտը քանի գնում նեղանում, ճնշւում է լեռների մէջ։ Բարակ, պաղ քամին սլսլում և մեր երեսին է քսում։ Արաքսի ջրերն հեռուից երևում են։ Արդէն հասել ենք Շարուրի դուռը։ Բարձր սիւնի վերայ կպցրած է մի կլորաձև թիթեղ և վրան գրած՝ **„Шаруро-Даралагязскій уѣздъ“**։ *Մեր առաջ բացւեց մի նոր հորիզոն, Շարուրի բամբակի ու բրնձի արտերով ծածկւած գեղեցիկ դաշտը։ Ժամը տասին Բաշ-Նորաշէն ենք։ Մեծ գիւղ է, հայերը քիչ, ոստիկանատուն, հեռագրատուն և ռուսաց տարրական դպրոց կայ։ Ուսուցիչը շնորհակալութեամբ բաժանեց մեզանից։ Ճանապարհի երկու կողմերում կանայք ու երեխաներ սփռւած՝ երգելով բամբակ են հաւաքում, տեղ-տեղ բրինձ են կալսում։ Անցկացանք Արփաչայ գետը, որի ջուրը շատ նւազ էր, որովհետև տասնեակ տեղերով ջրանցքներ են տարել դէպի արտերը։ Այս գետը շատ օգտաւէտ է, մինչև Արաքսը թափւելը շարուրցիք բանեցնում են։ Բերքերը մեծ մասամբ հայ մանր վաճառականներն են արտահանում դէպի Երևան։ Սրանց մեծ մասը զանազան գիւղերում ճոթի խանութներ է պահում և, պէտք է նկատել, լաւ պլոկում քիւրդ ու թուրք տգէտ ժողովրդին։ Դրանք Նախիջևանցիներ են, շատ ճարպիկ են։ Երեկոյեան Նախիջևան հասանք. իսկ միւս օրը Ջուլֆա, Մայր-Արաքսի ափը, ուր կայ մաքսատուն, հեռագրատուն, պոստի կայարան և երեք-չորս շինութիւն էլ ծառայողների համար։ Յարմար առիթ գտնելով, ընկերոջս թողի Ջուլֆա, իսկ ինքս միայնակ ճանապարհ ընկայ Ագուլիս։ Հասնելով Ազա գիւղը, որոշեցի փոստի ճանապարհը թողնել և աւելի կարճ ճանապարհով գնալ։*

Ժամը երեքն էր, ուրեմն պէտք էր շտապել։ Կէս ժամ է ինձ համար ձի են որոնում. այդ միջոցին մի ջորեպան պատահեց, այլ ես առանց սպասելու ջորի եմ նստում և գնում։ Ճանապարհը քանի գնում բարձրանում է։ Մեր առաջ հիւսիսից հարաւ ձգւում է մի լեռնաշղթայ. մտանք մի ձոր, ջորեպանն ինձ շտապեցնում է, արեգակն արդէն մայր մտնելու վրայ է, այդպիսի ժամանակ դուրս մնալը լաւ չէ։ Նա շարունակ չորս կողմն է նայում ու առաջ վազում։

Ձորը վերջանալուն մօտ է, ես հարցնում եմ.

—Դեռ շատ կայ։

—Այո, դեռ կէս ժամ ուղիղ կը գնանք, ապա երկու վերստի չափ ցած կը ծռւենք։ Հէնց այդ րոպէին իմ առաջ բացւեց սիրուն, գեղեցիկ Ագուլիսը։ Փառահեղ, հրաշալի տեսարան. ես անշարժ նայում էի և չէի կշտանում։ Ուղիղ իմ ոտների տակից սկսւում է մի խոր ձոր. այդ ձորը

իւր ծոցում կազմում է մի հովտիկ, հէնց այդ հովտի վրայ դրած է չվէյցարական Վերին Ագուլիսը։ Ամբողջ գիւղը խեղդուած է այգիների մէջ։ Շուտով գտայ բարեկամներիս, որոնք սիրալիր ընդունելութիւն ցոյց տուին ինձ։ Միւս օրն առաւօտեան վաղ եմ վերկենում արեգակի առաջին զարթ ճառագայթներով տեսնել գեղեցիկ Ագուլիսը։ Համեստ վայելուչ տներ եւրոպական ձեւով շինուած։ Ամեն տուն ունի բակ և ծաղկոց, շատերը նաև այգի։ Երկրարկանի և պատշգամբաւոր տներ ես շատ կան։ Փողոցները նեղլիկ են, բայց մաքուր։ Շուկան, երկու կողմից տնկուած բանաստեղծական, կոլոլ ծառերով, այնպէս մաքուր, այնպէս խնամքով է պահուում, որ Երեանը կ'ամաչէր դրա առաջ։ Ճշմարիտն ասած, ես համոզում եմ Ագուլիսին գիւղ անուանել։ Ամեն կողմ մի նոր բան, մի նոր տեսարան, ամեն կողմից բուրում է թարմութիւն, մաքրութիւն և գեղեցկութիւն։ Գնում եմ վանքը, մայր եկեղեցին։ Դա մի փառաւոր շինութիւն է, ներսից վերին աստիճանի մաքուր, լուսաւոր և ընդարձակ։ Առաստաղի կամարները ծածկուած են գեղեցիկ ծաղկանկարներով, գմբէթը ներսի կողմից պատած է կապոյտ ֆոնով. իսկ ֆոնի վրայ նկարուած ոսկեգոյն աստղեր։ Այդ պատկերը ներկայացնում է երկինքը, ագուլեցու վառ երեակայութեան ծնունդ։ Այս վանքն աւելի լաւ տպաւորութիւն է թողնում, քան մռայլ ս. Էջմիածինը։ Ագուլիսն ունի 10 եկեղեցի, որոնց ից չորսի մէջ է ժամերգութիւն լինում։ Վանքի գաւթում այնքան ծառերի մէջ իսկոյն աչքի է ընկնում մի սաղարթախիտ կոլոլ ծառ. դա անմահ Բաֆֆին է տնկել, դրա համար էլ տեղացիք կոչում են Բաֆֆու չիշատակ։ Գիւղը կառավարւում է ժողովրդից ընտրուած գիւղապետով։ Գողութիւն, սպանութիւն, անկարգութիւն Ագուլիսում հաղւագիւտ բաներ են։ Ամեն մի վէճ աշխատում են իրանց մէջ վերջացնել խաղաղութեամբ։ Կովկասի այդ կորած, մոլորուած խուլ անկիւնում մարդիկ կարծես անուղղակի կերպով ինքնավարութեան քաղցր պտուղները վայելում են... Փափագում եմ տեսնել դպրոցները, որոնք գաւառներում մի առանձին լարգանք են վայելում։ Իմ բաղդից այդ օրը փորձնական դաս կար հայոց լեզուից։ Նիւթը «Անրմանացան» գեղեցիկ ոտանաւորն է։ Ուրախալի է տեսնել, թէ ինչպէս ուսուցիչը մանկավարժարէն ոտանաւորի մէջ եղած հարցերն առաջարկում է աշակերտներին և իւր օգնութեամբ ու նրանց ընդհանուր ոյժով լուծում։ Դասի ժամանակ բոլոր աշակերտները գործում են։ Հարցերը մօտաւորապէս հետեւեալներն են—գիւղացին ինչ է ստանում իւր պարապմունքից, ինչ բան է երկրագործութիւնը, մշակութեան սիստեմը, գիւղացու արաերի ՀԱՅԱՍԵԼԸ զանազան պատահարներից, նրա աղքատանալու գլխաւոր պատճառները, նրա հարստահարողները, անասնապահութիւն, շերամապահութիւն և այլն. Դասի առաջին կէսը լաւ է գնում, բայց ուսուցիչը ոգևորւելով սկսում է հարցերը շատացնել, կուտակել, մէկից շուտով միւսն անցնել, թռիչքներ գործել։ Այնպէս որ վերջին հար-

ցերը լաւ չը բացատրեցան, ոմանք էլ սխալ։ Այդպիսի անտեսական դեղեցիկ հարցերի հետ շատ զգոյշ պէտք է վարուել, մի դասում հազիւ կարելի է երկուսը վերցնել։ Ուսուցիչը ոգեորելով՝ աչքից թողնում է նոյնպէս պարապմունքը։ Չը նայելով դասի վերջին կիսի անաջողութեանը, դարձեալ այդ դասը իւր նոր ուղղութեամբ, մեր արտերին մօտիկ հարցերով, լաւ տպաւորութիւն է թողնում։

Մեր դպրոցներում այդպիսի ուղղութիւն է հարկաւոր։ Երեխան պէտք է ճանաչէ իրան շրջապատող կեանքը, մարդկային դեղեցիկ և վատ յատկութիւնները, նա պիտի սովորի տարբերել ճշմարտութիւններ, վերջապէս նա պէտք է ճանաչէ կեանքի անպատկառ «կողակներին», անխիղճ, անպատկառ հարստահարողներին, որոնք, «Սերմանացանի» ասածին պէս՝ գիւղացու արիւնն են ծծում, պարտքի տակ խեղդում և որոնց ձեռքը պիտի ընկնի մի օր անմեղ երեխան ու իւր նման շատերը...

Ուսուցչի դաստաւորութեան մէջ գլխաւոր աչքի ընկնող բանն էր պարապմունքի ուղղութիւնը, նա (ուսուցիչը) եթէ աշխատի լիշած սխալներից աղատուել, շատ արդիւնաբեր կը լինի իւր թափած քրտինքը։ Մի բան աչքի է ընկնում. խմբի ամեն մի անդամը ձգտում է ուսանել և ուսուցանել, լարած հետևում է պարապմունքին, նկատողութիւնները փոխանակ պաշտօնական, խալթող կերպարանքի, ընկերական պատկեր են կրում։

Ագուլիսի դպրոցները իրանց բոլոր լարմարութիւնների հետ ունին և մի մեծ անլարմարութիւն—տղայոց դպրոցը գոթական, անպէտք ու անլարմար շինութիւն է։ Այդ օրը, ժամը երեքին մնաս բարև ասելով սիրուն Ագուլիսին և իմ թանկագին բարեկամներիս, վերադառնում եմ Ջուլֆ։ Կարանտինի վերատեսչի խելացի կարգադրութեան հիման վրայ ես ստիպած եմ երկու օր ու կէս էլ մնալ ռուսական ափի վրայ։ Ժամը մէկն է, ամենքս լսում ենք հրացան՝։ ձայներ և դուրս թռչում։ Մի սոսկալի պատկեր նկարեց մեր առաջ։ Մօտ եօթը պարսիկներ մերկացած՝ սկելով ու լող տալով կտրում են Արաքսը. կողակը նկատելով այդ. պահականոցից դատարկում է ու դատարկում բերդեանկան. մենք սարսափահար և անթարթ նայում ենք։ Զարմանալի լանդգնութիւն. օրը ցերեկով կարանտինի և պահականոցի միջով. որոնք իրարու շատ մօտ են, պարսիկները գետը կտրում անցնում են։ Դեռ ռուսական ափի վրայ նկատում եմ, որ կեանքը քանի գնում էժանանում է։ Պարապութիւնից ձանձրանալով՝ վճռեցի գնալ հին Ջուղայի աւերակները տեսնել, որ մեզնից չորս վերստաչափ հեռու է։ Նախ մտանք Ջուղայ գիւղը, որը նոր է, հազիւ 60 տարու լինի։

Բաւականին մեծ և մաքուր գիւղ է, ունի դպրոց։ Մշակում են ցորեն և բամբակ. իրանց մէջ կան մանր վաճառականներ, որոնք բամբակը մաս մաս առնելով իրանց համագիւղացիներից, արտահանում են Երևան։ Գիւղում բաւականին թուով նոր ձևի շինուած սենեակներ կան և տները մեծ մասամբ հալախով են։ Ուրախալի է, որ գիւղացիները փոխանակ

բամբասանքի ու չարախօսութեան, խօսում, վիճում են աւելի կարևոր բաների մասին... Երբ լսում են, թէ մենք կամենում ենք տեսնել հին Ջուղայի աւերակները, մի առանձին ոգևորութեամբ պատմում են հռչակաւոր Խօջա Խաչիկի մեծագործութիւնների մասին, որն ապրում էր Շահ-Աբբասի ժամանակ և լայտնի էր իբրև հասարակական գործող մարդ, աչքի ընկնող բարեգործ։ Ցիրաւի, Խօջա-Խաչիկի կեանքը բերնէ-բերան պատմելով, մի գեղեցիկ աւանդութիւն է կազմում մատաղ սերնդի համար։ Աւերակները համարեա ամբողջովին թաղուած են հողակոյտերի ու քարամիների տակ։ Միայն տեղ-տեղ պատերի կամ պարիսպների հետքերն են երևում։ Աւերակների կիսում հանդիպում ենք մի քարանսարայի, որի պատերը դեռ կանգուն են երևում. դա ժամանակին կանոնաւոր շինութիւն է եղել։ Ներսի պատերին կպած են տասնեակ խրթիթների աւերակներ։ Մեր առաջնորդը բացատրեց թէ, Ջուղայի աւերուելուց յետոյ, երբ այժմեան Ջուղեցիք սկսեցին զանազան տեղերից գաղթել այստեղ, սկզբում ապաստանեցան այս աւերակների մէջ։ Այդ պարոնի հայրն էլ իւր մանկութիւնը այն խրթիթներումն է անցկացրել։ Քարանսարայի դէմ և դէմը, Արաքսի միւս ափում կանգնած է մի ուրիշ աւելի փառաւորը, որի կարմիր քարով շինած պատերն անվնաս են և կարծես մի քանի տարուայ շինութիւն է։ Մոռացայ յիշել, որ աւերուած դարբասի մէջ մի մեծ, քարէ սիւն կայ, որի հիմքը միչտ քերում է Արաքսը։ Դա կոչւում է Շահ-Աբասի թաղտ։ Երբ Շահ-Աբաս առաջին անգամ մտել է Ջուղայ, նրան պատուելու համար շինած են եղել այդ թաղտը, որի վրայ և ընդունել են պատուաւոր հիւրին։

Գարդ, որոշ երևում է բաղնիսի շէնքը, բայց ամենից անվնաս ու կանգուն մնացել է գերեզմանատունը, որը բաղկացած է երեք մեծ խումբերից։ Գերեզմանաքարերի շատութիւնը ցոյց է տալիս, որ Ջուղան իւր ժամանակին մեծ քաղաք է եղել։ Մարդ հեռուից տեսնելով այդ ուղղահայեաց քարերը, կարծում է, թէ պարսից գերեզմանատուն է։

Ամեն մի գերեզմանի վրայ ձգած է երկու կամ երկու և կէս արշին երկարութեամբ ահագին քար, իսկ նրա արևելեան կողմից 2 արշինից մինչև մէկ սաժէն բարձրութեամբ ուղղահայեաց, քարին կպած՝ կանգնած է մի կոթող, այնպէս որ գերեզմանատունը ներկայացնում է կոթողների երեք մեծ խմբեր։

Կոթողների այն երեսի վրայ, որ նայում է գերեզմանին, քանդակուած են այնպիսի հրաշալի ծաղկանկարներ, քանդակներ, որ մարդ և հիանում և ապշում է, թէ ինչպէս դարեր առաջ դեղարուեստն այդքան զարգացած է եղել։ Նոյն իսկ ամեն մի կոթող առանձին ձևով, ճաշակով է քանդակուած։ Անիում էլ չկան այդպիսի հրաշալիքներ։ Փոխարքան իւր ճանապարհորդութեան ժամանակ տեսնելով այդ գերեզմանատունը միանգամայն հիանում է և հասարակութիւնից երեք քանդակուած քարեր խնդրում։

Բացի Խօջա-Խաչիկի և ամուսնու հոլակապ շիրիմները, որոնց կիսա-

գմբէթները քալքալման մէջ են։ Դատապարտելի է ջուղեցիների անտարբերութիւնը։ Անմահ Խաչիկի գերեզմանով պարծենալն ասեմ, թէ այդ անհոգութիւնը։ Աեղանից մի քիչ վերև, հսկայ ձորի մէջ երևում է Խոջա-Խաչիկի շինած մեծ ջրանցքի հետքը, որի երկարութիւնը մօտ հինգ վերստ է։ Երեկոյեան դէմ ետ եմ դառնում, ընկղմելով տխուր մտածութեան մէջ. Այո, Խաչիկը անթիւ խոշոր գործեր է արել հասարակութեան ընդհանրութեան համար. եթէ այդ խելացի, անձնուրաց գործողը մեր օրերում լինէր, մեր պինդ երես, եսասէր, ժանկոտ կոպէկներ սիրող. հարուստները պիտի սաստիկ ամաչէին...։ Միւս օրն արդէն անցել էի Մայր-Արաքսը և պարսից ափումն էի։ Ինչպէս մենք, նոյնպէս և շատ շատերը մեծ նեղութիւն քաշեցին։ Արդէն կամայականութեան աշխարհումն ենք։ Պարսկաստանում անցագիրները կապալով են տալիս։ Վերցնողը պէտք է և տուած փողը հանէ և աշխատանք անէ, որքան շատ պլոկէ, այնքան լաւ է։ Կարդ կայ, որ անցագիրը ցոյց տալու ժամանակ իւրաքանչիւր մարդ 20 կոպէկ ընծայ տայ։ Քանի կոպէկը երբեմն հասնում է մինչև 1, 2, 3, 5, 10 ռուբլու, նայելով, թէ անձնաւորութիւնը որքան ընդունակ է հարսահարելու։ Պարսից հպատակից, ամեն անգամ անցնելիս, անցագիրը ձեռքից առնում են, այնպէս որ առանց անցագրի ուր սիրտդ ուզէ, կարող ես գնալ։ Անցագրի հսկողները այնպիսի աղմուկ, ճղճղոց են հանում, որ Աստուած հեռու տանի։ Սպառնալիքներ անցնողին, նրան կասկածաւոր են համարում, սարսափելի անբարոյական հայհոյանքներ թափում։ Եթէ մարդը խեղճ է, մէկ հարուածին հինգը չի հասցնում, մէկ խօսքի դէմ տասը չի ասում, նրա բանը պրծաւ, մինչև իսկ բանդ են կոխում և եթէ հնգից մինչև տասը լուբլի չառնեն, բաց չեն թողնի։ Ո՞ւր է դատ, ո՞վ է դատաւորը, պաշտպանը, խելքդ գլուխդ հաւաքիր, դատն ու արդարութիւնը բռունցքի մէջ է, խփիր, ծեծիր պաշտօնեային, միրզային, գլուխը կոտրիր, միայն թէ կարողանաս 10—20 ռուբլի ձգել դրանց բերանը։

Ես այս բոլորը տեսնում և ասում եմ, չը լինի Աֆրիկայումն ենք։ Հաղիւ միրզաների ձեռքից պրծած, ձիպաններն արդէն իրար գլուխ են կոտրում մեզ համար։ Մէկը վերցրել էր մեր մաֆրաշը, միւսը խուրջինը, երրորդը վերարկուն և երեք տեղից մեզ քաշքշում էն, որ սրա կամ նրա ձին վարձենք։ Դէպքից օգուտ քաղելով՝ ուզում էի Նախավկայ վանքը տեսնել, որը մեզանից 12 վերստ հեռու է, Արաքսի ափին։ Ճաշից յետոյ ճանապարհ ընկայ։ Ջուղայ դիւղի դէմ ու դէմը իմ առաջ բացւեց Արաքսի խոր ձորը, որի երկու կողմից վիթխարի սեպաձև ժայռերը բարձրանում են դէպի երկինք։ Շարունակ լսում եմ կաքաւների կրկնչոցը, նրանք երբեմն ահագին խումբերով յանկարծ թռչում են մեր առաջից։ Արեւ հատ վայրի ոչխարներ արագ բարձրանում են դէպի ժայռերը։ Նրանք իրանց անմատչելի բնակարանից իջել էին Արաքսից ջուր խմելու, մենք նրանց խանգարեցինք։ Ճանապարհը, որին մի ահռելի ժայռ նեղում էր, բա-

ժանեց երկուսի։ Ընարում ենք երկրորդը, որը մի բարակ շաւիղ է և տանում է դէպի վանք։ Երեսացին մի խումբ ծառեր, ահա և Նախավկան իւր գեղեցիկ դիրքով։ Բայց դա աւելի ամրոցի է նման, քան վանքի։ Նա ընկած է խոր ձորի մէջ, մի փոքրիկ հարթութեան վրայ։ Վանքը գեղեցիկ չէնք ունի, միայն կաթուղիկէն ցածր է։ Զորս կողմի ահագին, հասա պարիսպը 2—5 սաժէն բարձրութիւն ունի։ Վանքին կից կայ և մի ուրիշ չինութիւն, որն ունի 20 ի չափ սենեակներ։ Ինչպէս երեւում է, հնումը դա ունեցել է մի ամբողջ միաբանութիւն, իսկ հիմայ ամայի դրութեան մէջ է։ Միայն երեք ամիս է, որ այդտեղ վանահայր նշանակուած է մի երիտասարդ վարդապետ, Վահան անունով։ Արդէն սկսել է վանքի անտեսական մասը հոգատարութեամբ բարեւլաւել, մի քանի կով ու առջառներ է ձեռք բերել, փոքրիկ անտառը, որի ծառերը իւր նախորդի օրով կտրատել, փչացրել են, կարգաւորում է։ Տարէնը մի անգամ մեծ ուխտագնացութիւն է լինում այդ վանքը, ուր գալիս են մինչև անգամ պարսիկ իւաներ, որոնք երբեմն իրանց ջերմեռանդութեամբ հանդերձ աւելորդ չեն համարում վանքի թէյի բաժակները գողանալ։

Գերապատիւ Վահան վարդապետի նախորդը թոյլ, ազահ մարդ է եղել, այնպէս որ իւր դուրս վռնտելու ժամանակ վանքն ամայութեան է հասցրել։ Այս տեղեկութիւններն ինձ հաղորդեց ժողովուրդը։

Միւս օրը վանքը թողի, լաւ տպաւորութեան տակ։

Երկու ձի վարձեցինք իւրաքանչիւրը մինչև Սէյդաւար գիւղը 7½ կուանով (կուանը մօտ 30 կոպէկ է)։ Ձիաները թամբ չունին, այլ ահագին, անճոռնի փալաններ են։ Երեկոյեան դէմ մեաս բարով արինք Մայր-Արաքսին և ճանապարհ ընկանք։ Դեռ երեք վերստ էինք գնացել, երբ թուրքն ակնարկեց, թէ վարձը ոչ թէ 7½ կուան է, այլ աւելի։

Արդէն բաւականին ընտելացել էի դրանց բնաւորութեանը։ Բարկանում եմ, ձիու զլուխը ետ շուռ տալիս և ասում.

—Դու անպիտան ես, ստախօս, ես ուղում եմ ուրիշ ձի վարձել։ Ընկերս նոյնպէս դարձաւ։ Նա մի փոքր դիմադրութիւնից յետոյ կակղեց և խոստովանում է, որ ինքն անամօթաբար սուտ է խօսացել։ Երեկոյեան իջևանեցինք Սուջա պարսիկ գիւղը, մեր ձիապանի տանը։ Բնակարանը բաղկացած է միայն մի բաժանմունքից, պատերը սովորականից աւելի բարձր են։ Ցան երեսին ամեն բան թափթրփած է։ Մի կողմում հացն է անխնայ վեր լցրած, նորա կողքին կեղտոտ թիակներն ու բահը, մի անկիւնում աթար է դարսած, դրանց առաջը ձիու փալանն է, այն կողմում պարսկական անճոռնի ոանամաններ... Մնացած մասը, ուր թոնիրն էր, իրանք էին բռնել, մենք էլ մեր չորերով տեղաւորուեցանք թոնրի միւս կողմում։ Թէ տունը, թէ իրանք սաստիկ կեղտոտ են, խեղճ, վատ հագնուած։ Ամեն կողմից գարշահոտութիւն է բուրում, շունչ քաշել անհնարին է։ Ամեն ներս մտնող գողի ագահ աչքերով նայում է մեր հագուստներին, չորերին։

Մեր նաչխուն խուրջինը, որի մի աչքը կողպած է. ամենքի սիրտը պղտորում է։ Կարծում են, թէ գանձ ենք տանում։ Մօտենում են այդ գալթակղութեան քարին, ձեռքով չփում, ամբողջ բոպկներով աչքերն անամօթաբար սեեռում նորա վրայ, ապա մի քանի հարցեր տալիս, կոտրած սրտով հեռանում են։ Ամեն մէկն իւր մէջ մեղ թալանի մի քաղցր պատառ էր համարում։ Դրանց կարծիքով՝ ով Ռուսաստանից է վերադառնում, նա անհամար փող ունի։ Սըսըլալով ներս են մտնում երկու կին, մինը տան մեծն է, միւսը ջահիլ հարսը։ Վերջինը մեղ նկատելով ծածկում է երեսը և մի անկիւն քաշւում։ Յաւալի, սրտաշարմ է տեսնել այդ թշուառ, արհամարհած արարածներին։ Աչնանալին սառը քամին դուրսն արդէն սուլում է, դրանք բոբիկ են, մինչև ծնկները բաց, սրունքներն արևից այրուած։ Մարմինները ծածկուած են անճոռնի ցնցոտիներով, վերևից գըցում են մի կեղտոտ ծածկոց։ Տան բոլոր ծանր աշխատանքները քաշել, ամուսնուն օգնել, լինել նրան հլու, հնազանդ, չը իսսել, օտարի երեսն անգամ նայելու իրաւունք չ'ունենալ և այս բոլորից լետոյ, երբ նորա գեղեցկութիւնը իսամրի, լիրբ ամուսինը կարող է նրան չարտել փողոց և նորը, թարմն ու գեղեցիկն ընտրել։ Արհամարհած կինը մարդկային էակ լինելովն հանդերձ կենդանի չէ, ինչ է։ Վրդովուած եմ, այդ ցաւալի տեսարանը ինձ ճնշում է։ Պարկում եմ, աշխատելով ստիպմամբ քնել, այդ տխուր տեսարանն ինձնից հեռացնել։

Երկու ժամ հազիւ եմ քնել, վեր եմ թռչում, գլուխս սաստիկ ցաւում է, չունչ չեմ կարողանում առնել. իսկոյն շտապում եմ դուրս, հալեալթը, և երեք ժամ անընդհատ մաղ գալիս։ Արշալոյսը բացուելուն պէս ճանապարհ ենք ընկնում։ Պաղ քամին փչում է, լաւ փաթաթուում ենք։ Ճանապարհը մի քիչ լետոյ բաժանուում է երկուսի, մէկը ձորով է գնում, որ շատ վտանգաւոր է, աւազակների բուն, միւսը սարահարթով, համեմատաբար աւելի ապահով։ Թուրքը մտմտուքի մէջ էր, վերջապէս ընտրում է երկրորդը։ Արևն արդէն դիպել է, գնում ենք վատ մշակած արտերի միջով, թուրքերինն է։ Ճանապարհը քանի գնում վատանում է, անտանելի դառնում։ Այս կողմերում սալլ չեն բանեցնում, ալլ ձի, ջորի և էշ։ Ցիապանն ուրախ-ուրախ դարձաւ մեղ՝

—Հը՛, դարդ միք անի, չէք թալանի, տեսէք ձեր խաթերը գնում եմ երկար, վատ, բայց ապահով ճանապարհով, ի հարկէ մի քանի կուռն աւելի կը բաշխէք, դուք հարուստ էք։

Սկսում է երգել և ապա ընդհատելով մի ծանր ախ քաշում և նորից դառնում մեղ։

—Ա՛խ, կարանտինում պատահած այն գեղեցիկ, նոր կարգած հարսն ինչքան դուրեկան էր, բոլոլ բուտաթով. լետ դառնալիս պլոտի երթամ նրան փախցնեմ, ինչ կը լինի, թող լինի։

—Չէ՞ որ դու կին ունիս, հարցնում ենք մենք։

—Ը՛հ, բան չունիս, խաբար է եղել, էն «գեօզալ» Թալանն ունենալուց յետոյ դրան վռնտելն հեշտ է. մի ես նորա կեանքին մեռնեմ, ուզենամ հինը նորի առաջ «ղարաւալ» կը շինեմ (բան անող կին)։ Ահա ձեզ պարսիկ գիւղացու կարճ և կտրուկ խօսքերը կնոջ մասին... Կնացածներս տեղը անջուր լինելով, անմարդաբնակ է։ Աջ ու ձախ տարածւած են բլրային անհագին խումբեր, որոնց միջից բացւում է մի ընդարձակ դաշտավայր։

Մեզ հանդիպում են երկու հետքոտ ճանապարհորդներ։

Բարև տալուց յետոյ նրանց առաջին խօսքն եղաւ՝

—Խէր Աստուծոյ միք գնա, ձեզ կը թալանեն։ Լուսադէմին քիչ մնաց մեզ սպանէին, հինգ վեց անգամ հրացան արձակեցին մեզ վրայ և մօտենալով բղաւում էին՝

—«Ինչ ունիք չունիք, թափեցէք։ Ծարներս կտրած, ձայն տուինք։

—Եկէք տարէք։ Վրայ են գալիս և տեսնում, որ աղքատ մարդիկ ենք, մի քանի հարւած տուին, մօտներիս ութը կռանը (կռանը ռուսական 30 կոպէկն է) խլեցին և հայհոյելով հեռացան, ափսոսալով իրանց փամփուշտներին։

Իրաւ որ բաւականին վտանգաւոր է, կամենում ենք մօտակայ գիւղից մարտինի հրացանով մի մարդ վարձել, այն պայմանով, որ հրացանը մեզ մօտ լինի, այլապէս վտանգաւոր է։ Գիւղում մարդ չը գտնւեց, մի փոքր տատանւելուց յետոյ, շարունակում ենք ճանապարհը, ունենալով մէկ րէւոլւէր և երկու սուր, որոնք բերդեանկայի մօտ ոչինչ են։ Քանի որ վտանգ կար, Թուրքն էլ ուզում էր, որ մարդ վարձէինք. բայց երբ աւազակների չը հանդիպեցինք և ճանապարհն աւելի ապահով դարձաւ, դա սկսեց լեզուն երկարացնել.

—Մարդ ինչու էք վարձում, ես ձեզ անվնաս տեղ կը հասցնեմ, ես սաղ լինեմ ձեզ համար, ես, ոչ ոք ձեր մատին դիպչել չի կարող. այն փողը որ մարդուն պիտի տաք, ինձ տուէք։ Մենք միայն լուռ զարմանում ենք նորա լրբութեան վրայ։ Ճանապարհին շարունակ գալիք վտանգները կրկնապատկում է, աշխատելով միշտ մեզ երկիւղի մէջ պահել և հէնց այդ ժամանակ իրան ներկայացնում է մեր պահապան հրեշտակը, մեր պաշտպանը ու կրկնում.

—Ինձ փող տուէք. փող։

Նա ինքն առաջին թալանողը կը լինէր մեզ, եթէ երեք յայտնի մարդիկների ներկայութեամբ չը վարձէինք նրան։ Նայում, նայում է մեզ, ծուխը պնչներից դուրս գալիս, բայց ձեռքումը ճար չը կայ։ Մի խօսքով, այստեղ կեանքը չափից դուրս էժան է։ Սպանելը, թալանելը բոլորովին սովորական բան է։ Այս կատարեալ անիշխան, վայրենի, աւազականոց երկրի մէջ միմիակ դատաւորը բերդեանկան կամ մարտինին է։ Մտել ենք Միլղիւղ դաշտը, մեր ճանապարհը ձգւում է սորա արեւելեան եզրով, բլուրների շղթայի տակով։ Այս անհագին հեռաւորութեան վրայից Մասիսը մի անգամ ևս ցոյց տւեց իւր սպիտակ գագաթը, կարծես կամենում էր վերջին հրաժեշտը տալ։

Դաշտը, որ նեղ ու երկար դիրքով հիւսիսից հարաւ է ձգւում, ջուր չ'ունենալով, բոլորովին անմշակ, անտէր է, միայն եզերքներում գիւղեր կան։